ՄՄԿ մեկնաբանություն 15
Գործառնական վարձակալություն. խրախուսող պայմաններ

Հղումներ

- ՀՀՄՍ 1 *Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում* (2007 թ. վերանայված տարբերակ)
- ՀՀՄՍ 8 *Հաշվապահական հաշվառման քաղաքականություն. փոփոխություններ հաշվապահական գնահատականներում և սխալներ*
- ՀՀՄՍ 17 *Վարձակալություն* (2003 թ. վերանայված տարբերակ)

Հարցադրում

1 Նոր կամ նորացվող գործառնական վարձակալության վերաբերյալ բանակցությունների ժամանակ վարձատուն կարող է վարձակալին խրախուսող պայմաններ տրամադրել՝ պայմանագիրը կնքելու համար: Այդպիսի խրախուսող պայմանների օրինակներից են կանխիկ գումարի կանխավ վճարումը վարձակալին կամ վերջինիս ծախսումների փոխհատուցումը կամ դրանց ստանձնումը վարձատուի կողմից (ինչպիսիք են տեղափոխման, վարձակալված գույքի բարելավման, ինչպես նաև վարձակալի նախկին վարձակալության պայմանագրի հետ կապված ծախսումները): Որպես այլընտրանք՝ վարձակալության սկզբնական ժամանակաշրջաններում վարձավճարը փոխադարձ համաձայնությամբ կարող է չգանձվել կամ կարող է գանձվել ցածր վարձավճար:

2 Հարցն այն է, թե ինչպես պետք է ճանաչվեն գործառնական վարձակալությանն առնչվող խրախուսող պայմանները թե՛ վարձատուի, և թե՛ վարձակալի ֆինանսական հաշվետվություններում:

Փոխհամաձայնություն

3 Նոր կամ նորացվող գործառնական վարձակալության պայմանագրի համար բոլոր խրախուսող պայմանները պետք է ճանաչվեն որպես վարձակալված ակտիվի օգտագործման համար պայմանավորված զուտ հատուցման անբաժան մաս՝ անկախ խրախուսող պայմանի բնույթից կամ վճարումների ձևից կամ ժամկետներից:

4 Վարձատուն պետք է ճանաչի խրախուսող պայմանների ընդհանուր արժեքը որպես վարձավճարներից ստացվող եկամտի նվազեցում վարձակալության ժամկետի ընթացքում՝ հիմնվելով գծային մեթոդի վրա, եթե միայն մեկ այլ սիստեմատիկ հիմունք առավել ներկայացուցչական չէ այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում նվազում է վարձակալված ակտիվից ստացվող օգուտը:

5 Վարձակալը պետք է խրախուսող պայմաններից ընդհանուր օգուտը ճանաչի որպես վարձավճարի ծախսի նվազեցում վարձակալության ժամկետի ընթացքում՝ հիմնվելով գծային մեթոդի վրա, եթե միայն մեկ այլ սիստեմատիկ հիմունք առավել ներկայացուցչական չէ այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում վարձակալը օգուտ է ստանում վարձակալված ակտիվի օգտագործումից:

6 Վարձակալն իր կրած ծախսումները, ներառյալ նախկին վարձակալության հետ կապված ծախսումները (օրինակ՝ պայմանագրի դադարեցման, տեղափոխման կամ վարձակալված գույքի բարելավման հետ կապված ծախսումները), պետք է հաշվառի այդ ծախսումների նկատմամբ կիրառելի ստանդարտների համաձայն, ներառյալ այն ծախսումները, որոնք փաստորեն փոխհատուցվում են խրախուսող պայմանների վերաբերյալ համաձայնության միջոցով:

Փոխհամաձայնության ամսաթիվը

1998 թ. հունիս

Ուժի մեջ մտնելը

Սույն մեկնաբանությունը գործում է 1999 թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող վարձակալության ժամանակաշրջանների համար: